ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1962 Общественные науки

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄ. ՀԱՅԿԱԿԱՆԻՆ

Մ. Ե. Հակոբյան

ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Հայրենական Մեծ պատերազմի սկզբնական շրջանում Հիտլերյան Գերմանիայի ժամանակավոր հաջողությունների հետևանքով թշնամու ձեռքն ընկավ Սովետական Միության տերիտորիայի մի զգալի մասը։ Ֆաշիստներին հաջողվեց գերել մեծ թվով կարմիրբանակայիններ։ Ռանտատակ տալով գոյություն ունեցող միջազգային ամեն մի օրենք, արհամարհելով մարդկային ամենատարրական նորմաները, հիտլերականները ամենաարբարոս եղանակներով ոչնչացնում էին թե՛ սովետական խաղաղ բնակչությանը և թե՛ անզեն նախկին կարմիրբանակայիններին։ Համակենտրոնացման ճամբարներում սովետական ռազմագերիները գտնվում էին եղեռնական ծանր պայմաններում։ Ռազմագերիների համակենտրոնացման ճամբարները վեր էին ածվել մահվան իսկական ֆաբրիկաների. պատերազմի սկզբից մինչև վերջին օրերը գործում էին հիտլերականների ստեղծած հրեշավոր կիզարանները, մարդասպան ավտոմեքենաները, հատուկ սարքերը։ Սովետական քաղաքացիներին հիտլերականները ոչնչացնում էին ամենաչնչին առիթներով ու առանց առիթի, դիշեր թե ցերեկ, գյուղերում թե քաղաքներում, տանը թե ճամփամիջում։

Դժոխային պայմաններում գտնվելով հանդերձ, սովետական ռազմագերիների ճնշող մեծամասնությունը երբեք չի կորցրել հավատը հաղթանակի նկատմամբ, մահվան դեմ հանդիման լինելով, մնացել է սովետական հայրենասեր, հավատարիմ Կոմունիստական պարտիային ու մեր ժողովրդին։ Ավելին, սովետական հայրենասերները հիտլերյան համակենտրոնացման ճամբարներում, օտար երկրների տերիտորիայում չեն դադարեցրել պայքարը ֆաշիզմի դեմ։ Կոմունիստների ղեկավարությամբ նրանք համախմբվել են ընդհատակյա հայրենասիրական կազմակերպություններում, հակաֆաշիստական լայն աշխատանքներ են ծավալել և դրեթե ամենուր օրինակ ծառայել մյուս երկրների ռազմագերիների համար։

Հիտլերյան համակենտրոնացման ճամբարներում ստեղծված հայրենասիրական շատ կազմակերպություններից մեկը գործում էր լեհական Ռենիամինովո տեղավայրում համակենտրոնացված հայ ռազմագերիների շրջանում։ Հակաֆաշիստական այդ կազմակերպությունը մի խումբ կոմունիստների ղեկավարությամբ երկարատև և նշանակալից գործունեություն է ծավալել 1943—1944 թթ. ընթացքում։ Այդ գործունեությունը պատկվել է փայլուն, մեր ժողովրդին պատիվ բերող հաջողություններով։ Չնայած դրան, նրա մասին՝ իբրև ֆաշիստական համակենտրոնացման ճամբարում ստեղծված և լայն գործունեություն ծավալած կազմակերպության, հատուկ ուսումնասիրություն չի գրվել։ Մամուլում, մասնավորապես թերթերում, այս կամ այն պատեհ առիթով խոս-

վել է միայն այդ կազմակերպության որևէ քայլի մասին, հակիրճ, երբեմն էլ կցկտուր տեղեկություններ են հաղորդվել նրա առանձին անդամների գործունեության վերաբերյալ։

Ուսումնասիրելով հիտլերյան ճամբարներում հայ ռազմագերիների մի մեծ խմբի հակաֆաշիստական գործունեությունը, մեզ մոտ կուտակվել է ահագին փաստական նյութ, որը հնարավորություն է ընձեռնում որոշ չափով ընդհանրացնել հայրենասիրական այդ մեծ շարժման պատմությունը, բնավ հավակնություն չունենալով սպառել ավելի խորն ու բազմակողմանի ուսումնասիրության կարոտ թեման։ Ըստ որում, հարկ ենք համարում նշել, որ սույն հոդվածի համար գլխավորապես հիմք են ծառայել այդ կազմակերպության հիմնադիրների ու ղեկավարների, ինչպես նաև նրա շուրջ 30 անդամների հուշերը, մի քանի սղագրություններ ու հրատարակված որոշ նյութեր և փաստաթղթեր։

* * *

1941 թ. վերջին և 1942 թ. սկզբին հիտլերականները Վարշավայից ոչ հեռու գտնվող Բենիամինովոյի համակենտրոնացման ճամբարն էին հավաքել սովետական շուրջ քսան հազար ռազմագերիներ[1]։ 1942 թ. սկզբին այնտեղ կային ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, ղազախներ, ուզբեկներ, որոնք իրարից զատ-զատ, գտնվում էին լրացուցիչ փշալարերով շրջափակված զոնաներում։ Իսկ ճամբարի չորս բոլորը ձգված էին մի քանի շար լարափակոցներ՝ 2,5—3 մետր բարձրությամբ, յուրաքանչյուր 50—100 մետրի վրա կանգնեցված աշտարակաձև դիտակետերով, որտեղից հսկում էին ավտոմատավորներն ու գնդացրորդները։

Ռազմագերիներն այստեղ էին բերվում ռազմաճակատի տարբեր հատվածներից, օկուպացված հոսպիտալներից, թշնամու գրաված շրջաններից։ Չնայած ամեն օր ֆաշիստները հաբյուրավոր մարդիկ էին ոչնչացնում, ճամբարը շարունակում էր մնալ բազմամարդ, որովհետև ռազմագերիների նորանոր խմբեր էին բերվում։

Մասսայական ոչնչացումներից զատ ֆաշիստները պարբերաբար որսում էին ռազմագերիների մեջ գտնվող բարձրաստիճան հրամանատարներին, քաղաշխատողներին, որոնում կոմունիստներին, սովետական պետական օրգանների ծառայողներին, և նրանց խոշտանգում, ծաղր ու ծանակում, տանջամահ անում, կենդանի թաղում։ Այդպիսիներին հայտնաբերելու համար ֆաշիստները ռազմագերիներից ստեղծել էին լրտեսական ցանց՝ այդ նպատակով ընտրելով սովետական կարգերից դժգոհ տարրերին, քրեական հանցագործներին, անկայուն էլեմենտներին։ Բայց ֆաշիստներին նույնիսկ այդ միջոցներով շատ բան չէր հաջողվում անել։ Ռազմագերիների մեծամասնությունը միշտ էլ շարունակում էր մնալ սովետական հայրենասեր, տոգորված էր ֆաշիզմի ջախջախմանը նպաստելու, նույնիսկ անմարդկային պայմաններում գործելու ցանկությամբ։ «Ես,—գրում է նախկին ռազմագերի Վ. Վարդանյանը,—ծանր ապրումներ էի ունենում այն ժամանակվա իմ անգործունյա վիճակի համար, որովհետև իմ հայրենիքը արյունաքամ էր լինում և այրվում գերմանա-ֆաշիստական բարբարոսությունների ու անսանձ կամայականությունների կրակի

[1] Տե՛ս «Советская авиация», 1957, № 116.

մեջ։ Ես աճել ու դաստիարակվել եմ սովետական կարգերի օրոք, դաստիարակվել եմ մեր մեծ՝ Սոցիալիստական Հայրենիքին անկեղծորեն ու անձնվիրաբար նվիրվելու ոգով... Այդ ամենն ինձ պարտավորեցնում էր ձեռքերը ծալած չնստել.... այլ ռազմաճակատին օգնելու ուղիներ փնտրել...»[2]։

Այս պայմաններում էլ, Բենիամինովոյի համակենտրոնացման ճամբարում գտնվող հայ ռազմակերիների շրջանում, 1942 թ. մայիսին ստեղծվեց Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպություն (ՀԸՀԿ)։ Նրա ստեղծողները եղան սովետական կադրային սպաները, քաղաշխատողները, պարտիական աշխատանքի դպրոց անցած և կյանքի հարուստ փորձ ունեցող մարդիկ, որոնք հանգամանքների չարաբաստիկ բերումով գերվելով, շարունակում էին մնալ սովետական ջերմ հայրենասերներ, կոմունիստներ և պայքարի դժվարին ասպարեզն էին ոտք դնում իրենց պարտքի խոր գիտակցությամբ, հաղթանակի նկատմամբ ունեցած անմար հավատով, խղճի ու զգացմունքների բնական թելադրանքով։

«Մայիսի վերջերին,—ՀԸՀԿ-ի ստեղծման մասին իր հուշերում գրում է Ս. Մ. Բուդյոննու անվան ռազմա-էլեկտրատեխնիկական ակադեմիայի դասընթացներից մեկի նախկին հրամանատար Ստ. Յաղջյանը[3],—ինձ ուղարկեցին Բենիամինովոյի ճամբարը, ուր ես հանդիպեցի իմ ընկերներին՝ Սովետական Բանակի սպաներ Ալեքսանդր Ղազարյանին[4], Դավիթ Մինասյանին[5] և Վահան

---

2 Վ. Վարդանյան, հուշեր (բաղկացած 7 մեքենագիր էջերից), էջ 3—4։

3 Ստեփան Հակոբի Յաղջյանը ծնվել է 1906 թ., Կիլիկիայի Մարաշ գավառի Դաշ Օլուզ գյուղում։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նրա ծնողները կոտորվել են, իսկ ինքը Արարիայում, Կոստանդնուպոլսում, Հունաստանում թափառական կյանք վարելուց հետո 1925 թ. փոխադրվել է Սովետական Հայաստան։ 1929 թ. ավարտել է Անդրկովկասյան ռազմական դպրոցը, իսկ 1938 թ.՝ Ս. Մ. Բուդյոննու անվան ռազմական ակադեմիան։ Հայրենական պատերազմը սկսվելու պահին նա գտնվում էր հատուկ նշանակության 25-րդ հեծելազորային դիվիզիայի կապի պետի պաստում։ ՍՄԿՊ անդամ է 1928 թ.։ Այժմ աշխատում է Լենինգրադի գիտա-հետազոտական ինստիտուտներից մեկում՝ իբրև ղեկավար-ինժեներ։ Պարգևատրված է Կարմիր Աստղի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի և Ֆրանսիական ռեսպուբլիկայի երկու շքանշաններով և մի քանի մեդալներով։

4 Ալեքսանդր Արկադիի Ղազարյանը ծնվել է 1907 թ., Օդեսայում։ Կոմերիտմիության կոչով Կարմիր Բանակում ծառայության է անցել 1926 թ.։ Ավարտել է Անդրկովկասյան հետևակային զինվորական դպրոցը, իսկ հետագայում ծառայության է անցել օդային նավատորմում։ 1941 թ., լինելով Ռազմա-օդային ակադեմիայի ավարտական կուրսի ունկնդիր, Ղազարյանը նշանակվում է 19-րդ բանակի օդային ուժերի հետախուզական բաժնի պետ։ Գերվել է գլխից ստացած վերքի պատճառով, գիտակցությունը կորցրած վիճակում՝ Վյազմայի տակ, ուր զորամասը շրջապատվել էր թշնամու ուժեղացված զորքերով։ Ընդհատակյա աշխատանքի առաջին քայլերը կատարել է Վյազմայում։ Այժմ պաշտոնաթող փոխգնդապետն աշխատում է ՍՍՌՄ Քաղաքացիական օդային նավատորմի հայկական առանձին խմբի ուսումնա-վարժական էսկադրիլիայի պետի պաստում։ ՍՄԿՊ անդամ է 1932 թ., պարգևատրված է Լենինի, Կարմիր Դրոշի, երկու Կարմիր Աստղի շքանշաններով, ֆրանսիական երկու շքանշանով և մի քանի մեդալներով։

5 Դավիթ Նեոֆի Մինասյանը ծնվել է 1903 թ., Նոր Բայազետում (այժմ Կամո)։ Կոմերիտմիության ուղեղրով զինվորական ծառայության է անցել 1924 թ.։ Մինչև Հայրենական Մեծ պատերազմը նա 58-րդ հրետանային գնդի հրամանատարն էր։ Նրա գունդը թշնամու դեմ կռվի է բռնվել սահմանագլխին, պատերազմի հենց առաջին օրը՝ Արևմտյան Բուգի ափին։ Գերության սկզբնական շրջանում նա գտնվում էր Համելսբուրգի հիտլերյան զնդանում, ուր մասնակցել է սովետական գեներալներ Ալավերդյանի, Նիկիտինի և Կարբիշևի գլխավորությամբ գործող ընդհատակյա կազմակերպության աշխատանքներին։ ՍՄԿՊ անդամ է 1930 թ.։ Այժմ պաշտոնաթող մայոր Դ. Մինասյանն աշխատում է Հայ Կինոստուդիայի դիմադրական բաժնի վարիչի պաստում, ունի կառավարական մի քանի պարգևներ։

Վարդանյանին[6], որոնց հետ մինչ Հայրենական պատերազմի սկսվելը սովորել և ծառայել էի Անդրկովկասյան զինվորական օկրուգում։ Մենք բոլոր չորս մայորներս ՍՄԿՊ անդամ էինք և իրար լավ գիտեինք։ ...Այդ ծանոթությունը մեզ հնարավորություն տվեց հանդիպման առաջին իսկ օրվանից անկեղծ և լիովին վստահությամբ խոսել Հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպություն ստեղծելու մասին։ ՀԸՀԿ-ն ստեղծել սկսեցինք 1942 թ. մայիսի վերջերից՝ գլխավորապես Սովետական Բանակի սպաներից ու քաղաշխատողներից»[7]։

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում սովետական կադրային սպաները ձգտում էին ամենայն զգուշությամբ հայտնաբերել այն ռազմագերիներին, որոնք պարտիայի անդամ էին, ունեին զինվորական կոչում, քաղաշխատողներ էին։ Մատնիչներից ու պրովոկատորներից զգուշանալու նպատակով սկզբում որոշվեց հայրենասիրական կազմակերպության մեջ ներգրավել սահմանափակ թվով մարդկանց՝ միայն սպաներին։ Շուտով ստուգված և վստահելի մարդկանցից ստեղծվեց ընդհատակյա կազմակերպության կորիզը, որի մեջ բացի հիշյալ չորս մայորներից մտնում էին գումարտակի կոմիսար Մկրտիչ Գրիգորյանը, 2-րդ կարգի զինվորական բժիշկ Հարություն Խաչատրյանը, 2-րդ կարգի զինվորական անասնաբույժ Միխաիլ Սիսաձենը, կապիտան Ավետիս Կարապետյանը, կապիտան Սենոք Խաչատրյանը, ավագ լեյտենանտ Արտեմ Բաբայանը, ավագ լեյտենանտ Ռուբեն Գալստյանը, քաղղեկ Հովհաննես Բոշիկյանը, քաղղեկ Պանդուխտ Մելոյանը, քաղղեկ Արամ Ավետիսյանը, լեյտենանտ Միքայել Մարկոսյանը (հրեա, որի իսկական անունն ազգանունն է Իոսիֆ Կոգան), լեյտենանտ Արամայիս Հովսեփյանը, լեյտենանտ Ալեքսանդր Վարդանյանը, ատամնատեխնիկ Լեոնիդ Շահինյանը (հրեա, որի իսկական անունն ազգանունն է Լեոնիդ Շագալ), կրտսեր սերժանտ Վաղինակ Խաչատրյանը[8]։

Կազմակերպությունը գլխավորելու համար որոշվեց ստեղծել ղեկավար կենտրոն, որը ստացավ ընդհատակյա բյուրո անուն։ Նրա մեջ մտան կոմունիստներ Ս. Յաղջյանը, Ալ. Ղազարյանը, Դ. Մինասյանը, Վ. Վարդանյանը, իսկ որոշ ժամանակ հետո նաև Ավետիս Կարապետյանը[9]։ Բյուրոյի ղեկավարի

---

6 Վահան Մկրտչի Վարդանյանը ծնվել է 1905 թ., Բաթումիում։ Սովորել է նախ Օդեսայի հետևակային, ապա Կիևի հրետանային զինվորական դպրոցներում։ 1928 թ. ծառայության է մտել հայկական հրաձգային դիվիզիայում։ 1939 թ. ավարտել է Զրահա-տանկային ակադեմիան, ստացել մայորի կոչում, իսկ 1940 թ. ընդունվել է ՍՄԿՊ շարքերը։ Պատերազմը սկսվելու պահին եղել է Բելոստոկում, դերվել է հուլիսի կեսերին։ Այժմ աշխատում է ՀՍՍՌ Անտառատնտեսության վարչությունում իրեն գլխավոր ինժեներ, ունի կառավարական պարգևներ։

7 Ս տ. Յ ա ղ ջ յ ա ն, հուշեր, էջ 1։ Այս հուշերը բաղկացած են երկու մասից, մեքենագրական 26 էջից (20+6)։ Սույն հոդվածում օգտագործվում է միայն առաջին հատվածը, որը կրում է «Իմ հիշողությունները Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպության (ՀԸՀԿ) մասին» վերնագիրը։ Այս, ինչպես նաև հոդվածում օգտագործվող բոլոր հիշողությունները գրվել են մեր խնդրանքով։ Օգտագործելով առիթը մեր ջերմ շնորհակալություններն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր նպաստեցին մեր աշխատանքին։

8 Նույն տեղում, էջ 1—2։

9 Ավետիս Միսաելի Կարապետյանը ծնվել է 1913 թ., Սարիղամիշում։ Հայրը զոհ է դնացել հայկական կոտորածներին։ Մանկությունն անց է կացրել որբանոցներում։ Սովորել է Երևանյան դպրոցում, ապա ավարտել Լենինականի ՖԴՈՒ-ն, իսկ 1931 թ. կոմերիտմիության ուղեգրով զինվորական դպրոց է ուղարկվել։ Հայրենական պատերազմին մասնակցել է իրեն գումարտակի շտաբի պետ։ ՍՄԿՊ անդամ է 1941 թ.։ Այժմ աշխատում է իրեն աշղեկ։

պարտականությունը դրվեց Ստեփան Յաղջյանի վրա։ Ապա անմիջապես որոշվեցին ընդհատակյա կազմակերպության գործունեության եղանակը և առաջիկա գլխավոր խնդիրները։ Որոշվեց, որ կազմակերպությունը կգործի շղթայաձև սիստեմով։ Յուրաքանչյուր օղակի մեջ կմտնեն 3—4 մարդ, որոնցից յուրաքանչյուրը կճանաչի և կապ կպահպանի 1—2 հոգու հետ։ Բյուրոյի անդամներից յուրաքանչյուրը կգլխավորի որոշակի թվով օղակների աշխատանքը և իբրև կանոն կխուսափի բյուրոյի մեկ այլ անդամի հետ լիզալ կերպով հանդիպելուց։ Կոնսպիրացիայի նպատակով կիրառված այդ մեթոդը, ինչպես պարզվեց հետագայում, ապահովեց կազմակերպության անընդմեջ գործունեությունը, հնարավոր դարձրեց անխուսափելի ձախողումների ժամանակ պահպանել ընդհատակի հիմնական ուժերը։

Վերհիշելով Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպության առջև սկզբնական շրջանում դրված նպատակները, Ստ. Յաղջյանը գրում է, որ «Բենիամինովոյի ճամբարում ՀԸՀԿ-ն իր առջև դրել էր հետևյալ խնդիրները.

1. Ռազմագերիների մեջ հակաֆաշիստական պրոպագանդա մղել։

2. Ճամբարի ադմինիստրացիայից թաքցնել քաղաշխատողներին և հրեա ազգությամբ ռազմագերիներին։

3. Ճամբարից Լեհաստանի պարտիզանների մոտ ռազմագերիների մասսայական փախուստներ կազմակերպելու նպատակով կապ հաստատել լեհ կոմունիստների հետ»[10]։

Հայ ռազմագերիներին հիտլերականները երկար չպահեցին Բենիամինովոյի ճամբարում։ Բայց այն 3—4 ամիսներին էլ, երբ այստեղ գործում էր ՀԸՀԿ-ն, նրա անդամներին հաջողվեց իրենց հակաֆաշիստական ընդհատակյա պայքարի առաջին քայլերն անել։ Ձգուշանալով պրովոկատորներից, նրանք շոշափում էին ռազմագերիների տրամադրությունները, երբեմն հանում կայուն հայրենասերներին, անհատական զրույցներ ունենում մարդկանց հետ, բացատրում ֆաշիստական բանակի հաջողությունների ժամանակավոր բնույթը, հիմնավորում Կարմիր Բանակի անպարտելիությունը, նրանց մեջ վառ պահում սերն ու նվիրվածությունը Կոմունիստական պարտիայի ու Սովետական Հայրենիքի նկատմամբ։ Այդ աշխատանքի ընթացքում էլ ընդհատակյա կազմակերպության անդամներն ընտրում, ստուգում ու հակաֆաշիստական գործունեության մեջ էին ներգրավում հայրենասերներին, հակահարված տալիս ծախվածներին, առանձին դեպքերում «լոելյայն» դատաստան տեսնում նրանց հետ։ Դրա շնորհիվ գնալով բարձրանում էր ռազմագերիների բարոյական վիճակը, ամրապնդվում հավատը հաղթանակի նկատմամբ, է՛լ ավելի կարծրանում ատելությունը դեպի հիտլերյան բարբարոսները։ Աստիճանաբար ավելանում էր ընդհատակայինների թիվը, ընդլայնվում հակաֆաշիստական գործունեության շրջանակը։

Որոշակի հաջողության հասավ ՀԸՀԿ-ն նաև Կարմիր Բանակի նախկին քաղաշխատողներին քողարկելու, ֆաշիստական վրեժխնդրությունից փրկելու, ինչպես նաև հրեա ռազմագերիներին թաքցնելու գործում։ Մատնիչներին հայտնաբերելու, նրանց վնասազերծ անելու նպատակով՝ ընդհատակյա բյուրոն վստահելի մարդկանցից մի քանիսին հանձնարարեց ստանձնել բա-

10 Ստ. Յաղջյան, հուշեր, էջ 2։

բաքների ավադների, ճամբարի ներսի մաքրությունը պահպանողների պարտականությունները, դառնալ ներքին կարգին հետևող «ոստիկաններ»։

—Բանն այն է,—բացատրում է ընդհատակյա կազմակերպության ստեղծողներից մեկը, բյուրոյի անդամ Ալ. Ղազարյանը,—որ դավաճանները հիտլերականներին հանդիպելու և իրենց մատնությունները կատարելու համար բարաքից կամ զոնայից բացակայելու թույլտվություն էին ստանում բարաքի ավագից, տվյալ զոնայի ոստիկանից։ Այդ պոստերում մեր մարդկանց ունենալով մենք հնարավորություն կստանայինք ոչ միայն ճանաչել դավաճաններին ու զգուշանալ նրանցից, այլև խուսափել հնարավոր անակնկալներից ու ծուղակներից»[11]։

Ընդհատակի առաջադրած այդ խնդրի կատարմանը նպաստեց ճամբարի պետի թարգմանիչը, որը հայտնի էր Յան ազգանունով և որը դաղտնի կապի մեջ էր ընդհատակայինների հետ։ «Սկզբնական շրջանում,—գրում է Ալ. Ղազարյանը,—մեզ անգնահատելի օգնություն ցույց տվեց սովետական իսկական հայրենասեր, նախկին չեկիստ Յանը, ազգությամբ հրեա։ Նա ճամբարում աշխատում էր իբրև թարգմանիչ։ Նրա ջանքերի շնորհիվ ճամբարային բոլոր հանգուցային պոստերում, սկսած խոհանոցից՝ վերջացրած ճամբարային ոստիկանությունից, դրվեցին սովետական մարդիկ։ Ճամբարային ոստիկանության պետն, օրինակ, մի նախկին չեկիստ էր՝ ազգությամբ աբխազ, իսկ նրա տեղակալը՝ նախկին քաղաշխատող։ Դա հնարավորություն էր տալիս մեզ տեղյակ լինել ճամբարային բոլոր գործերին, հայտնաբերել պրովոկատորներին և ուղղակի դավաճաններին, որոնք, բարեբախտաբար, շատ չէին»[12]։

Հրեա ռազմագերիներին թաքցնելու նպատակով ընդհատակը նպատակահարմար գտավ հայի անվան ու ազգանվան տակ քողարկել մի քանի հրեաների, նախապես նրանց նախապատրաստելով հնարավոր անակնկալների դեպքում իբրև հայ ներկայանալու համար։ Այդ ճանապարհով հաջողվեց փրկել Լեոնիդ Շագալին, Իոսիֆ Կոգանին, երկու դերասանների (որոնց անունները մոռացվել են) և էլի մի քանի հոգու։ Հրեա ազգության պատկանող ռազմագերիներն իրենց հերթին ակտիվորեն մասնակցում էին ընդհատակյա աշխատանքներին։

Մյուս կարևոր քայլը, որ ձեռնարկեց ընհատակը՝ Բենիամինովոյի համակենտրոնացման ճամբարում, լեհ հայրենասերների հետ կապ ստեղծելու առաջին փորձն էր։ Այդ խնդիրը գլխավորապես պետք է իրագործեր ավագ լեյտենանտ Ռուբեն Գալստյանը, որը իբրև վարորդ, հիտլերականների հսկողությամբ, հաճախ մեկնում էր Վարշավա։ Կապն արդեն հաստատվում էր, երբ շուրջ հազարի հասնող հայ ռազմագերիներին անսպասելի կերպով փոխադրեցին Դեմբլենի ճամբարը, իսկ մինչ այդ Գալստյանը հանվեց ավտովարորդի պոստից[13]։

Մի այլ կարևոր խնդիր ևս ՀԸՀԿ-ն իրագործեց. երբ հայտնի դարձավ, որ հիտլերականները մտադիր են տարբեր ազգությունների ռազմագերիներին

---

11 Տե՛ս Ալ. Ղազարյանի հուշերի մեր կատարած սղագրությունը (բաղկացած 46 էջից), էջ 13։

12 А. А. Казарян, За правое дело. См. сборник «О чем не говорилось в сводках. Воспоминания участников движения Сопротивления», М., Госполитиздат. 1962, стр. 352.

13 Նույն տեղում և Ս. Ս. Յաղջյան, հուշեր, էջ 2—3։

տարբեր ճամբարներ փոխադրել, ընդհատակյա բյուրոն խնդիր դրեց կապվել մյուս ազգություններին պատկանող ռազմագերիների հետ և նրանց շրջանում հակաֆաշիստական աշխատանքներ ձեռնարկել։ Դա արվեց բյուրոյի անդամների միջոցով՝ Բենիամինովոյից փոխադրվելու նախօրեին։ Ճամբարի «լուծարքման ժամանակ,—նույն տեղում գրում է Ալ. Ղազարյանը,—բյուրոն աշխատանք կատարեց մյուս ազգությունների գերիների շրջանում և պայմանավորվեց, որ ընդհատակյա աշխատանքները կշարունակվեն նոր վայրերում։ Վրացիների ու օսերի հետ աշխատանք կատարեցի ինքս, իսկ ադրբեջանցիների, ղազախների, ուզբեկների և թուրքմենների հետ՝ մայորներ Յաղջյանն ու Մինասյանը»։

Դեմբլինում հիտլերականները կենտրոնացրին միայն հայ ռազմագերիներին։ Այստեղ ՀԸՀԿ-ն շարունակում էր իր գործունեությունը և գլխավորապես նույն նպատակներն էր հետապնդում, ինչ Բենիամինովոյում։ Ընդհատակում ընդգրկված նոր անդամներից ակտիվ աշխատանք էին կատարում՝ Ազատ Խաչատրյանը, Վահան Պետրոսյանը, Բրեստի ամրոցի բաջարի պաշտպաններից Սոս Նուրիջանյանը և ուրիշներ։

Սակայն, հոկտեմբերին դրությունն անակնկալորեն փոխվեց։ Ազգային գումարտակներ ստեղծելու և դրանք Սովետական Բանակի դեմ հանելու նպատակով հիտլերականները հայ ռազմագերիներին բաժանեցին երեք տարբեր խմբերի՝ մեկում համեմատաբար առողջները, որ պետք է լեգիոնի մեջ մտնեին, մյուսում՝ ծերերն ու տկարները, երրորդում՝ հաշմանդամներն ու վիրավորները։ Վերջինների ճակատագիրը մնում էր անհայտ. պարզ չէր, թե ինչ է սպասվում նրանց՝ մահ, թե՞ ճամբարային կյանք։ Երբ հայտնի դարձավ ֆաշիստների ստոր դիտավորությունը, ՀԸՀԿ-ի բյուրոն իր հերթական անելիքները պարզելու համար նիստի հավաքվեց։ Այն տեղի ունեցավ ռազմագերիներին հատկացված բարաքներից մեկում, այն ժամանակ, երբ ճամբարի հիտլերական անձնակազմը ճաշում էր, իսկ հետո պիտի նրանց նոճաշյա հանդիստը սկսվեր։

Բյուրոյի անդամների կարծիքները բաժանվեցին, վեճ առաջացավ։ «Մենք սովետական ռազմիկներ ենք, և մեր պարտքն է անմիջապես հեռանալ։ Ես չեմ կարող թշնամու համազգեստ կրել։ Ավելի լավ է կործանվել, քան թե այդպիսի խայտառակություն»,—ասաց բյուրոյի անդամ Դավիթ Մինասյանը։ Նրան առաջինն առարկեց բյուրոյի քարտուղար Ստ. Յաղջյանը։ «Լավ,—ասաց նա,—ենթադրենք, համաձայնվեցինք քեզ հետ և ճամբարից մեզ հետ տարանք ռազմագերիների որոշ մասին։ Իսկ ինչպե՞ս վարվել մնացածների հետ։ Նրանց թողնե՞լ բախտի քմահաճույքին»։ Յաղջյանին պաշտպանեց բյուրոյի մյուս անդամը՝ Վահան Վարդանյանը։ «Մենք բոլշևիկներ ենք և պետք է սկսած գործը բոլոր պայմաններում հասցնենք մինչև վերջ»,—նրանց միացավ Ավետիս Կարապետյանը[14]։

Երկար վիճաբանությունից հետո բյուրոյի մեծամասնությունը որոշեց մնալ ճամբարում, շարունակել ընդհատակյա աշխատանքը, կազմակերպել ու գլխավորել ռազմագերիների պայքարը, իսկ եթե սովետական քաղաքացիներին հարկադրաբար «ֆելդգումարտակներ» քշեն, ապա աշխատանքը շա-

14 Տե՛ս Сборник «О чем не говорилось в сводках», стр. 353.

ունակել նրանցում և հիտլերականների դեմ ուղղել նրանց իսկ զենքը[15]։ Հաջորդ օրը բյուրոյի որոշումը հայտնի դարձավ բոլոր ընդհատակյաներին։

Հայ ռազմագերիներին տարբեր խմբերի բաժանելը և դրանք իրարից մեկուսացնելը ՀԸՀԿ-ի համար դժվարին կացություն էր ստեղծել։ Ընդհատակի ակտիվ գործիչները մասնատվել էին միմյանցից, ուժերը ցրվել էին, անհնար էին դարձել համատեղ գործողությունները։ Այդ առթիվ բյուրոն որոշեց ամեն կերպ ընդհատակի ուժերը համախմբել գլխավոր օղակում՝ ռազմագերիների առաջին խմբում, որը, ինչպես հաջողվեց վերջնականապես պարզել, իրոք նախատեսվում էր ազգային գումարտակ (լեգեոն) ստեղծելու համար։ Այստեղ օգնության հասան առաջին խմբի հայրենասեր ռազմագերիները, որոնք ֆաշիստներին հայտնի իրենց միակ տարբերանշանները՝ համարները փոխանակեցին երկրորդ և երրորդ խմբերն ընկած ակտիվ ընդհատակյաների հետ և սրանց հնարավորություն տվեցին առաջին խումբն անցնել։ Դրանից առաջ այդ խմբերում ստեղծվեցին ընդհատակյա հակաֆաշիստական բջիջներ։

Մի քանի օրից հետո հիտլերականները հայ ռազմագերիների առաջին խումբը խիստ հսկողության տակ փոխադրեցին Պուլավիի ուսումնա-վարժական կայանը։ Այստեղ իշխում էր ֆաշիստական նույն ռեժիմը, ինչ որ ճամբարում, միայն այն տարբերությամբ, որ սնունդը փոքր ինչ տանելի էր։ Շուտով ռազմագերիների քրքրված արտահագուստը փոխարինվեց գերմանական գորշ, կիսամաշ համազգեստներով, իսկ հետո ֆաշիստները բացահայտ կերպով հայտարարեցին «ֆելդգումարտակ» ստեղծելու մասին։ Հարցն այսպես էր դրված՝ կամ ազգային գումարտակ, կամ մահ։ Այդպես, մահվան սպառնալիքի տակ ծնվեց հայ ռազմագերիներից բաղկացած հերթական «ֆելդգումարտակը»։

Դա թվով 4-րդ գումարտակն էր, որ ֆաշիստները բռնությամբ ստեղծել էին հայ ռազմագերիներից[16]։ Այստեղ իր ակտիվ գործունեությունը ծավալեց Ստ. Յաղջյանի գլխավորած ընդհատակյա կազմակերպությունը, որն այդ ժամանակ իր շարքերում արդեն ուներ 120 անդամներ։ Կազմակերպության նոր անդամներից ընդհատակյա ակտիվ գործունեություն էին ծավալում Բարեկամ

---

15 М. Епископосов. Путь мужества, «Огонек», 1957, № 19, стр. 21.

16 Մենք դեռևս բավարար տեղեկություններ չունենք նախորդ երեք գումարտակների ճակատագրի մասին։ Վկայություններ կան, որ ֆաշիստներին չի հաջողվել այդ գումարտակները ևս դուրս բերել սովետական ժողովրդի դեմ։ Դա մասնավորապես վերաբերում է առաջին գումարտակին, ուր ընդհատակյա կազմակերպություն կար։ Որքան մեզ հայտնի է հետագայում նրանում գլխավոր դեր էին կատարում Ենոք Խաչատրյանը, Ժորա Գրիգորյանը, Սերգո Բարսեղյանը, Արմո Ավետիսյանը և ուրիշներ։ Խաչատրյանը, Ստ. Յաղջյանի վկայությամբ, 1942 թ. սեպտեմբերից կապ ուներ իր գլխավորած ընդհատակյա բյուրոյի հետ։ Առաջին գումարտակի ակտիվ ընդհատակյաներից Ի. Անդրեասյանի, Լ. Հովհաննիսյանի և ուրիշների հուշերը պատմում են, որ գումարտակն ուղարկվելով ռազմաճակատ, Սովետական Բանակի դեմ մարտի պիտք է մտցվեր Մայկոպի տեղամասում։ Ընդհատակը ապստամբության նախապատրաստվելով, մտադիր էր առաջին իսկ օրը անցնել մերոնց կողմը։ Սակայն մատնության հետևանքով ապստամբությունը ձախողվեց։ Հիտլերականները ձերբակալելով ընդհատակյաներին, կախաղան հանեցին նրանց գլխավորներին, իսկ մնացածներին զինաթափ անելով ֆաշիստական գնդանները նետեցին։ Այդ մասին տե՛ս «Советская историческая энциклопедия»-ի առաջին հատոր, էջ 614։ Այդ գումարտակի ընդհատակյաների գործունեությանն է նվիրված «Առաջինների ճակատագիրը» խորագրով մեր վավերագրական ակնարկը «Ավանգարդ» թերթի 1962 թ. հունիսի 21-ի համարում։

Մկրտչյանը, Ռուբեն Դանիելյանը, Մինաս Մինասյանը, Հրանտ Հայրապետյանը և ուրիշներ։

Նոր իրադրությունը նոր խնդիրներ դրեց ընդհատակի առջև. ֆաշիստների զենքը նրանց իսկ դեմ ուղղելու նպատակը նախ և առաջ թելադրում էր ստեղծվող նոր գումարտակի հրամանատարական պոստերը գրավելու անհրաժեշտությունը։ Առանց դրան հնարավոր չէր գումարտակը քաղաքականապես և կազմակերպորեն նախապատրաստել առաջիկա ելույթին՝ լինի դա արևելյան (սովետա-գերմանական) ճակատ ուղարկվելու, թե Լեհաստանում երկար ժամանակ պահվելու դեպքում։ Այդ գլխավոր խնդրի իրագործման հնարավորությունը շուտով ընձեռնեցին իրենք գերմանացիները։

Բանն այն է, որ ֆաշիստներն իբրև կանոն ստեղծվող ազգային գումարտակների հրամանատարներ էին նշանակում հենց գերմանացի զինծառայողներին, որոնք անկարող էին կարգադրություններ անել գերմաններն բոլորովին չիմացող անձնակազմին։ Ստեղծված դրությունից դուրս գալու համար հիտլերականները հարկադրված էին գերմանացի հրամանատարների օգնականներ նշանակել ռազմագերիներից, որոնք նախնական որոշ դասընթացներ էին անցնում։ Դրանք որևէ լուրջ իրավունքով չէին օժտվում և սոսկ փոխանցում էին գերմանացի հրամանատարների կարգադրությունները, բայց այդ պոստերում իր մարդկանց ունենալով, ՀԸՀԿ-ն զգալիորեն կհեշտացներ ընդհատակյա աշխատանքները։ Ահա ինչու, երբ գերմանացիները սկսեցին ռազմագերիներից մարդիկ ընտրել կրտսեր հրամանատարական դասընթացների համար, ընդհատակյա բյուրոն հանձնարարեց մի խումբ վստահելի մարդկանց սովորելու ցանկություն հայտնել։ Այդպես ակտիվ ընդհատակյաներ Վահան Վարդանյանը (Ոսկանյան), Արտեմ Բաբայանը, Իոսիֆ Կոգանը (Միքայել Մարկոսյան), Ալեքսանդր Վարդանյանը, Միշա Սահյանը, Ավետիս Կարապետյանը մտան մոտ 40 հոգուց բաղկացած այն խմբի մեջ, որ հիտլերականները ուղարկեցին սովորելու։ Կրտսեր հրամանատարների դասընթացներն անց էին կացվում Վարշավայից ոչ հեռու գտնվող Լիգինովո գյուղաքաղաքում։

Մի որոշ ժամանակ անց հիտլերականները, շռայլ խոստումներով առաջարկեցին սովետական կադրային սպաներ Ստ. Յաղջյանին, Ալ. Ղազարյանին և Դ. Մինասյանին հատուկ դասընթացներ անցնել Բեռլինում։ Ընդունել այդ առաջարկը նշանակում էր ուժերը ցրել, առանց ղեկավար կենտրոնի թողնել ընդհատակը։ Ուստի, բյուրոն խորհուրդ տվեց զգուշությամբ մերժել այդ առաջարկը։ Յաղջյանը պատճառաբանեց վնասված ոտքը, Ղազարյանը վկայակոչեց գլխից և ծոծրակից ստացած վերքերը, իսկ Դ. Մինասյանը՝ ծայրաստիճան հյուծվածությունը։ Այդպես հաջողվեց խուսափել հատուկ դասընթացներից, բայց անհնար դարձավ միասին մնալ։ Ֆաշիստները Ղազարյանին ու Մինասյանին ետ ուղարկեցին Դեմբլինի ճամբարը, իսկ Յաղջյանին սկսեցին բացահայտ կասկածով վերաբերվել։

Երկու ամսից հետո դասընթացներից գումարտակ վերադարձան բոլորը և հրամանատարների օգնականների պոստեր ստանձնեցին։ Դրանցից նրանք, որոնք ՀԸՀԿ-ի անդամ էին տարբեր վաշտերում գտնվելով, իրենց շուրջը համախմբեցին հայրենասեր ու վստահելի ռազմագերիներին։ Հակաֆաշիստական ընդհատակյա աշխատանքը նոր թափ ստացավ։

Այդ ժամանակից սկսած ՀԸՀԿ-ի բյուրոն դարձավ կենտրոնական։ Նրա միջոցումով ընդհատակյա ղեկավար օղակներ ստեղծվեցին գումարտակի առան-

ձին վաշտերում ու դասակներում։ Սրանց ընդհանուր ղեկավարությունն ապահովում էր կենտրոնական բյուրոն, որն իր կապերն ուներ նաև Դեմբլինում գտնվող ընդհատակյաների հետ։

Իր առջև ունենալով նույն խնդիրները, ինչ-որ Դեմբլինում, Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպությունն իր գլխավոր խնդիրն էր համարում զումարտակը զինված ապստամբության նախապատրաստելը։

Ահա ինչ է գրում իր դասակում կատարված ընդհատակյա աշխատանքների մասին դասակի հրամանատարի օգնական, կենտրոնական բյուրոյի անդամ Ավետիս Կարապետյանը.

1. Դասակում ստեղծեցի ակտիվ և նրանց զինեցի ընտիր զենքերով։

2. Ընդհատակյա կազմակերպության մեջ ընդունեցի Միխայիլ Ասրևին, Գրիգորյանին, Բաղդասարյանին, Սարգիս Կարապետյանին և ուրիշների։ Նրանց հանձնարարեցի իրենց ջոկատներում ու դասակներում հակաֆաշիստական աշխատանք ծավալել։

3. Դասակում գաղտնի կազմակերպության անդամներից ստեղծեցի հատուկ մի խումբ, որը հարկ եղած դեպքում պետք է անմիջապես ոչնչացներ դասակի գերմանական անձնակազմը։

4. Սովորեցրի, թե ինչպես քանդել գերմանական զենքերը և, մաս-մաս կարելով շինելի աստառին, ճամբարից դուրս տանել, որպեսզի, եթե չհաջողվի ապստամբության հանել լեգեոնը, ընդհատակն իր տրամադրության տակ որոշ քանակով զենք և զինամթերք ունենա։

5. Հանձնարարեցի ակտիվ ընդհատակյաներ Պանդուխտ Մելոյանին և Ազատ Խաչատրյանին, հակաֆաշիստական աշխատանք կատարել 2-րդ վաշտում[17]։

Իր վաշտում կատարված ընդհատակյա հակաֆաշիստական աշխատանքների մասին պատմելով, Արտեմ Բաբայանը նկատում է. «Մեր կազմակերպության աշխատանքն այդ ժամանակ այնքան որոշակի ու կայուն բնույթ էր ստացել, որ մենք հնարավորություն ստացանք գործողությունների կոնկրետ պլան մշակել։ Իմ վաշտում մասնավորապես առանձնացված էին հատուկ մարդիկ, որոնք ազդանշան տրվելուց, անմիջապես պետք է ոչնչացնեին վաշտի գերմանական անձնակազմ... Ամբողջ վաշտը պատրաստ էր կատարելու ընդհատակյա կազմակերպության առաջադրանքը...»[18]։

Կենսագործելով իր առջև դրված կարևոր խնդիրներից մեկը, ՀԸՀԿ-ն կապ հաստատեց լեհական ընդհատակի հայրենասիրական ուժերի հետ։ Այդ կապն առաջինն հաստատեց ակտիվ ընդհատակային Ստեփան Տեր-Գրիգորյանը։ Մի հայ ռազմագերի բժշկի հետ, բուժ գործի դրվածքին ծանոթանալու պատրվակով, նա եղավ Պուլավիի քաղաքային պոլիկլինիկայում, ուր հանդիպեց այնտեղ աշխատող բուժքույր Ելենա Դմիտրևնա Բավիոնիկին, որը կապ ուներ լեհ ընդհատակյաների հետ[19]։ 1942 թ. աշնանը ստեղծված այդ կապը հետագ-

---

17 Ա. Կարապետյան, հուշեր, էջ 21—23։ Այս հուշերը բաղկացած են մեկ ընդհանուր և երկու սովորական տետրերից (ընդամենը 129 էջ)։

18 Ա. Բարայան, հուշեր, էջ 8։ Արտեմ Բաբայանի հուշերը գրված են ռուսերեն, բաղկացած են մեքենագրված 15 էջից։

19 Տե՛ս Ն. Դ. Բավիոնիկի հուշերը և «Советская историческая энциклопедия», т. I, стр. 614.

հետև ընդլայնվեց։ Այնուհետև լեհական ընդհատակի և Պուլավիի մոտակայքում գործող լեհ պարտիզանների հետ կապ են հաստատել Ա. Կարապետյանը, Մ. Մարկոսյանը (Ը. Կոզան), Վ. Վարդանյանը, Ա. Բարայանը և ուրիշներ։ Նրանք ընդհատակի հանձնարարությամբ հանդիպումներ են ունեցել լեհ պարտիզան Վետչիկի, ընդհատակյա գործիչներ Անտոն Սորիխի, Մարիայի, Ռուդենկոյի և այլոց հետ[20]։ Շուտով այդ կապը գործնական բնույթ ստացավ. ընդհատակը զենք ու զինամթերք էր հայթայթում լեհ հայրենասերների համար, իսկ սրանք իրենց հերթին լուրեր էին հաղորդում ռազմաճակատում տիրող իրադրության, թշնամուն՝ Կարմիր Բանակի հասցրած հարվածների մասին և միաժամանակ օգնում առանձին ռազմագերիների և նրանց փոքր խմբերի փախուստներին հիտլերյան ճամբարից, թաքցնում նրանց, ապա օգնում միանալու ֆաշիզմի դեմ մարտնչող լեհ պարտիզանների խմբերին։ Յուրայինների մասին լուրերն ու հաղորդումները հսկայական չափով բարձրացնում էին ռազմագերիների հոգեվիճակը, ամրապնդում նրանց հավատն ու վճռականությունը, խթանում ընդհատակյա աշխատանքները։

1942 թ. վերջին և 1943 թ. սկզբներին զգալիորեն ավելացավ ՀԸՀԿ-ի անդամների թիվը։ Դա ոչ միայն տեղի ունեցավ նվիրված, հայրենասեր մարդկանց շարունակ իրենց շուրջը համախմբող Պուլավիի ընդհատակյաների ջանքերի, այլև Դեմբլինում գտնվող ՀԸՀԿ-ի անդամների եռանդուն գործունեության շնորհիվ։ Այստեղ ևս ընդհատակյա բյուրոյի անդամներ Ալ. Ղազարյանին և Ռ. Մինասյանին հաջողվեց իրենց շուրջը համախմբել հայրենասեր ուժերին և նրանց միջոցով հավաքագրել վստահելի մարդկանց, որոնք հետագայում Պուլավի փոխադրվելուց անմիջապես հետո կապվում էին կենտրոնական բյուրոյի անդամների և ակտիվ ընդհատակյաների հետ։

ՀԸՀԿ-ի բյուրոյի Դեմբլինում գտնվող երկու անդամների առջև ծառացած կարևոր հարցերից մեկը Սովետական Բանակի նախկին քաղաքացիներին հիտլերականների հետապնդումներից ու հալածանքներից պահպանելն էր։ Այդ ուղղությամբ ևս նրա ակտիվ անդամներին հաջողվեց որոշակի քայլեր կատարել։ «...Դեմբլինում,—պատմում է Ալ. Ղազարյանը,—մեզ հաջողվեց հիտլերյան ոստիկանների ձեռքը հեռացնել գերմանացիների բռնած քսաներկու սովետական քաղաքացիներից, որոնց մեծամասնությունը վրացիներ էին։ Սկզբում ուզում էինք նրանց փախուստը կազմակերպել ուղղակի ճամբարից, բայց դա անհնար դուրս եկավ։ Այն ժամանակ որոշեցինք քաղաքացիներին մտցնել բանվորական դումարտակի մեջ... Սակայն քաղաքացիներին բանվորական դումարտակ չէին նշանակում։ Այդ քաղաքացիների փախուստին օգնելու համար քսաներկու հայ ռազմագերիներ ճամբարային իրենց համարները փոխանակեցին քաղաքացիների հետ։ Եթե հիտլերականներին հաջողվեր բացահայտել այդ թակարդը, ապա նրանք դաժանորեն հաշվի կտեսնեին թե նրանց և թե մյուսների հետ։ Բայց, բարեբախտաբար, ամեն ինչ բարեհաջող վերջացավ։ Բանվորական դումարտակի հետ քաղաքացիները դուրս

20 Նույն տեղերում և Ստ. Յաղջյանի, Ա. Կարապետյանի, Ի. Կոզանի, Ա. Բարայանի հուշերը։ Լեհական ընդհատակի հետ հայ ռազմագերիների ունեցած անլեգալ կապերի մասին առաջքավոր վկայություններ է պարունակում նաև պուլավցի Ռոմուալդ Մազուրկևիչի նամակը, որը կրճատումներով հրապարակել ենք «Ավանգարդ» թերթի այս տարվա № 74-ում։

21 Ընդհատակյաների ընդհանուր թվի մասին տարբեր ընկերներ տարբեր թվեր են հաղորդում։ Դրանք տատանվում են 400—450-ի միջև։

եկան ճամբարի սահմաններից, և նրանց բոլորին հաջողվեց փախչել»[22]։

Ակտիվ ընդհատակյաների գործունեությունը Դեմբլինի ճամբարում բնավ չէր սահմանափակվում դրանով։ Այն կրում էր ավելի լայն բնույթ և մեծապես նպաստում էր Պուլավիի Կենտրոնական բյուրոյի աշխատանքներին։ «Մենք,—գրում է Ղազարյանը,—ընտրում էինք հավատարիմ մարդկանց, որոնք մեր առաջադրանքով ռազմագերիներին նախապատրաստում էին պարտիզանների կողմն անցնելուն։ Այդ աշխատանքը ես և ընդհատակյա բյուրոյի երկրորդ անդամը՝ Դավիթ Մինասյանը կատարում էինք Դեմբլինի ճամբարում։ Այն ռազմագերիներին, որոնց ֆաշիստները հարկադրաբար լեգեոնի մեջ մրտցընելու համար կազմավորման կայան էին քշում, մենք նշանաբան էինք տալիս, որպեսզի նրանք կարողանան կապվել կազմավորման կայանում գտնվող Ստեփան Յաղջյանի հետ։ Նշանաբանը մենք ընտրել էինք հարազատ Կովկասի լեռան անունները՝ Մասիս և Արարատ։ Վստահություն ներշնչող և մեր կողմից ստուգված մարդը պետք է Ստեփան Յաղջյանին հանդիպելիս ասեր «Մասիս» և ստանար՝ «Արարատ» պատասխանը։ Դրանից հետո Ստեփան Յաղջյանն անհրաժեշտ տեղեկություններ էր ստանում ռազմագերիների մասին։ Այսպես շարունակվեց մի քանի ամիս»[23]։

Սակայն գործում էր նաև ֆաշիստական ագենտուրան։ Որքան էլ կոնսպիրացված էին ընդհատակյա աշխատանքները, հիտլերականներին հաջողվեց շոշափել լեգեոնում ծավալվող գաղտնի գործունեության ինչ-որ հետքեր։ Դա սկսվեց այն բանից, որ գումարտակի հիտլերյան հրամանատարությանը, մատնության հետևանքով, հայտնի դարձավ, որ Միքայել Մարկոսյան անվան տակ թաքնված է հրեա սովետական սպան։ Մինչ ֆաշիստները կձերբակալեին հայրենասեր սպային, ընդհատակը կազմակերպեց Իոսիֆ Կոգանի փախուստը Պուլավիի ուսումնա-վարժական կայանից։ Դա արվեց Ստ. Յաղջյանի ցուցումով, ընդհատակյաներ Ալեքսանդր Վարդանյանի, Հարություն Խաչատրյանի, Ավետիս Կարապետյանի, Արտեմ Բաբայանի, Վահան Վարդանյանի և Միշա Սահյանի միջոցով։

Ակտիվ ընդհատակյաների կյանքը փրկվեց[24], բայց դա առիթ եղավ, որ նույն

---

22 А. А. Казарян, За правое дело. См. сборник «О чем не говорилось в сводках». Воспоминания участников движения сопротивления, М., Госполитиздат, 1962, стр. 354—355.

23 А. Казарян, Мужество побеждает, «Советская авиация», 1957 г., 17-го мая.

24 Իոսիֆ Կոգանը (Միքայել Մարկոսյանը) 17 տարի շարունակ լցիտեր իր կյանքը փրկած մարդկանց ճակատագրի մասին։ Միայն 1960 թ. նրան հայտնի դարձան հիտլերյան ճամբարների իր մարտական ընկերների հասցեները։ Մայիսին նա եկավ Երևան, եղավ Թբիլիսիում, հանդիպեց իր հայ ընկերներին։ Պարզվեց, որ նա Պուլավիի ուսումնա-վարժական կայանից փախչելուց հետո կարողացել է թաքնվել հետապնդող ֆաշիստներից, ապա միանալ լեհական պարտիզանական այն խմբին, որի հրամանատարը հայտնի էր Վետչիկ մականունով։ Մի քանի ամիս լեհ հայրենասերների հետ ֆաշիստների դեմ պայքարելուց հետո, Կոգանը Լեհաստանից անցել է Ուկրաինա, միացել սովետական պարտիզաններին և շարունակել իր ակտիվ մարտական պայքարը ֆաշիզմի դեմ։ Նրը պարտիզանական միավորումը, Ուկրաինայի ազատագրումից հետո միացավ Կարմիր Բանակին, Կոգանը սովետական զորամասերի շարքում մարտերով հասավ մինչև Պրագա։ Նրա կուրծքը զարդարված է մարտական քաջագործությունների համար ստացած Կարմիր Աստղի և Հայրենական Պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով։ Այժմ նա աշխատում և բնակվում է Ուկրաինական ՍՍՌ-ի Խմելնիցկու մարզի Ստարոկոստանտինովո քաղաքում (տե՛ս Ի. Կոգանի փաստաթղթերի լուսանկարչական պատճենները և հուշերը՝ բաղկացած 23 էջից, նաև «Երևան», 1960, մայիսի 26, „Радянське Поділля", Хмельницький, 1960, 31 липня, „Коммунист", Ереван, 1961, 6-го мая և այլն)։

օրը՝ 1942 թ. փետրվարի 22-ի գիշերը, ֆաշիստները ձերբակալեն արդեն կասկածի տակ գտնվող 15 ընդհատակյաների։ Նրանց մեջ էին՝ Ստ. Յաղջյանը, Ավետիս Կարապետյանը, Վահան Վարդանյանը, Արտեմ Բաբայանը, Ալեքսանդր Վարդանյանը, Բարեկամ Մկրտչյանը, Ռուբեն Դանիելյանը և ուրիշներ։ Ծանր հարված էր իջել ամբողջ ընդհատակի վրա։

Երկու շաբաթ տևեց ամենադաժան միջոցներով կատարվող հարցաքննությունը։ Ֆաշիստները դիմում էին ամեն միջոցի, որպեսզի ընդհատակյա կազմակերպության մասին տեղեկություններ կորզեն։ Բայց ապարդյուն։ Ձերբակալվածները ցուցաբերեցին պողպատյա կայունություն, կամքի մեծ ուժ, խորը գաղտնապահություն։ Ապարդյուն անցան նաև իրար հաջորդող խուզարկություններն ամբողջ վարժականում։ Ստույգ տեղեկություններ չունենալով ընդհատակի մասին և չկարողանալով ընկճել ձերբակալվածներին, գերմանացիները ստիպված եղան կալանավորներից ութին, դրանց թվում նաև Ստ. Յաղջյանին, լեգեոն վերադարձնել։

Մաբտին տեղի ունեցավ կալանքի տակ պահվածների դատավարությունը։ Ֆաշիստական զինվորական տրիբունալի առջև հանգնեցին սովետական յոթ հայրենասերներ, որոնք «որպեսզի ընկերներից հարվածը վանեն, նրանց ազատեն խոշտանգումներից և թաքցնեն խնամքով նախապատրաստված գործը, «մեղքն» իրենց վրա վերցրին»[25], հայտարարեցին, որ իրենք մտադիր էին փախչել ճամբարից։ Նրանցից երկուսը՝ Ավետիս Կարապետյանը և Բարեկամ Մկրտչյանը դատապարտվեցին գնդակահարության[26]։ Ավետիս Կարապետյանը ոչ միայն վայրենի հարցաքննության ու դատավարության ամբողջ ընթացքում, այլև գնդակահարության դատապարտվելուց հետո էլ իրեն դրսևորեց իբրև կայուն, անհողդողդ կոմունիստ։ Բանտում անցկացրած վերջին օրը նա պատի վրա մակագրեց հետագայում հայտնի դարձած և պայքարի կոչ անող հետևյալ խոսքերը՝ «Армяне! Армения останется свободной республикой только при советском строе. Боритесь за Советскую власть!»[27].

Մյուս ընդհատակյաները՝ Վահան Վարդանյանը, Արտեմ Բաբայանը, Հովհաննես Բոշիկյանը, Ալեքսանդր Վարդանյանը, Ռուբեն Դանիելյանը դատապարտվեցին տարբեր ժամկետներով բանտարկության[28]։ Նրանք մեղադրվեցին հակաֆաշիստական պրոպագանդա մղելու, փախչելու նախապատրաստության, ինչպես նաև հրեա Ի. Կոգանի փախուստը կազմակերպելու համար։ Ամբողջ դատավարության ընթացքում Պուլավիի ուսումնա-վարժական կայանն ամբողջապես մեկուսացված էր արտաքին աշխարհից[29]։

Դրանով, սակայն, ֆաշիստները չսահմանափակվեցին։ Բնավ չվերացավ կասկածը 4-րդ գումարտակում տարվող հակաֆաշիստական աշխատանքների նկատմամբ։ Թեև հիտլերականները չկարողացան դա փաստերով հաստատել,

---

25 «Комсомолец», 1958 г., № 27, статья «Четвертый эшелон».

26 Հետագայում մահվան դատավճիռը փոխարինվեց 10—12 տարվա բանտարկության։ Մինչև պատերազմի հաղթական ավարտը՝ շուրջ երեք տարի Ավետիս Կարապետյանը անց է կացրել ֆաշիստական զնդաններում։ Բարեկամ Մկրտչյանի ճակատագիրն անհայտ է։

27 «Огонек», 1957 г., № 19, стр. 21.

28 Դատապարտված այդ հինգ ընդհատակյաներից ողջ են մնացել Արտեմ Բաբայանն ու Վահան Վարդանյանը։ Մյուսների ճակատագիրը դարձյալ մնում է անհայտ։ Ենթադրվում է, որ նրանք չդիմանալով բանտային դաժան պայմաններին, զոհվել են ֆաշիստական զնդաններում։

29 Տե՛ս Ստ. Յաղջյանի, Ա. Կարապետյանի, Ա. Բաբայանի հուշերը։

բայց ակնառու դարձավ, որ գումարտակն իբրև մարտական միավորում, որը կարելի է սովետական ժողովրդի դեմ դուրս բերել, պիտանի չէ։ Շուտով գումարտակի ամբողջ հայ կրտսեր հրամկազմը և կասկածելի լեգիոնականների մի մեծ խումբ, թվով 74 մարդ, Պուլավիից ուղարկվեց մահվան ֆաշիստական ճամբարները[30], իսկ մայիսին գումարտակը վերակազմավորվեց և արևելյան ճակատ ուղարկելու փոխարեն, Հոլանդիա տարվեց։ Այստեղ էլ ֆաշիստներին չհաջողվեց սովետական մարդկանց ֆաշիզմի դեմ պայքարող ուժերի դեմ հանել։

Ակտիվ ընդհատակայիններին ձերբակալելն ու նրանց մի մասին ֆաշիստական զնդանները նետելը լուրջ հարված էր ընդհատակի համար, բայց այն միաժամանակ լուրջ փորձություն էր ՀԸՀԿ-ի համար, և ընդհատակայինները հիանալի բռնեցին այդ քննությունը։

Ուժերը, ճիշտ է, ջլատվեցին, սակայն ընդհատակայինները շոշափելի զգացին իրենց զորությունը, բնավ չընկճվեցին։ Շուտով Պուլավիի ուսումնավարժական կայանում ընդհատակյա գործունեությունը նորից ծավալվեց, բայց ավելի կոնսպիրացված, ավելի զգույշ։ Ընդհատակի մեջ տարբեր ժամանակներում ներգրավված նոր մարդկանց թվումն էին Արփիար Մարտիրոսյանը, Վահան Պետրոսյանը, Միհրան Եղիազարյանը, Երանոս և Դավիթ Կոստանդյան եղբայրները, Վահան Օհանյանը, Պարգև Մալխասյանը, Արշավիր Տեր-Կարապետյանը, Երվանդ Ղևոնդյանը, Հակոբ Հակոբյանը, Ժորա Հակոբջանյանը, Սերգեյ Բագրատյանը, Տիգրան և Պետրոս Ամիրխանյան եղբայրները, Վաղինակ Խաչատրյանը, Հայրիկ Եփրեմյանը, Արշակ Հախվերդյանը, Պետրոս Ղազանչյանը, Սիմոն Նարինյանը, Հրանտ Հովհաննիսյանը, Սամսոն Գրիգորյանը, Սիմոն Ֆրանգուլյանը, Իվան Ռավոևը, Լյուդվիգ Հայրումյանը։

Ընդհատակյա աշխատանքների ծավալմանը խթանեց 1943 թ. հուլիսին տեղի ունեցած ընդհատակյա նիստը՝ բաղնիքում, ուր որոշվեց ՀԸՀԿ-ի խնդիրները նոր իրադրության պայմաններում և կոնկրետ հանձնարարություններ տրվեցին ընդհատակայիններին։ Լևոն Տիտանյանն ամրացվեց նոր ստեղծված առաջին վաշտին, Սուխարիչ Հարությունյանը՝ երկրորդին, Ռուբեն Մանուկյանը՝ երրորդին, Արամ Ազոյանը՝ չորրորդին։ Կոնկրետ առաջադրանքներ ստացան նաև Արշակ Հախվերդյանը, Արամայիս Հովսեփյանը, Գրիշա (Գուգուշ) Մինասյանը և ուրիշներ։

Շարադրելով ընդհատակյա կազմակերպության առջև այդ ժամանակ դրված խնդիրները, Լևոն Տիտանյանը գրում է.

1. Ընդլայնել կապերը լեհ հայրենասերների հետ։

2. Գումարտակներում և հավաքականի վարժական վաշտերում կազմակերպել ընդհատակայինների նոր խմբեր և հակաֆաշիստական լայն աշխատանքներ ծավալել։

3. Ելնելով ստեղծված իրադրությունից և հաշվի առնելով փորձը, նախապատրաստել և կազմակերպել ռազմագերիների փոքր խմբերով փախուստը լեհ պարտիզանների մոտ։ Նրանց խնդիրը համարել անհրաժեշտ բազա նախապատրաստելն՝ ամբողջ վարժականի անձնակազմի փախուստի և պարտիզանական գործողությունների համար։

---

30 Դ. Մինասյանի պատմածից։

4. Ամեն կերպ և բոլոր պայմաններում խանգարել գերմանացիներին՝ իրենց ստոր նպատակների համար օգտագործել սովետական մարդկանց[31]։

Դեռ 1943 թ. սկզբներին ֆաշիստները կազմավորել էին դարձյալ հայ ռազմագերիներից բաղկացած 5-րդ և 6-րդ գումարտակները։ Կենտրոնական ընդհատակյա բյուրոյին հաջողվեց կարճ ժամանակամիջոցում այդ գումարտակներում ստեղծել ընդհատակյա խմբեր, որոնք աստիճանաբար ընդլայնվելով, ամրացան ու լայն աշխատանքներ ծավալեցին։

«Հինգերորդ գումարտակում,—գրում է Ստ. Յաղջյանը,—ընդհատակյա աշխատանքները ղեկավարում էին դեռևս Բենիամինովոյի համակենտրոնացման ճամբարից ՀԲՀԿ-ի անդամներ, գումարտակային կոմիսար Մկրտիչ Գրիգորյանը, քաղղեկ Արամ Ավետիսյանը։ Հետո այդ գումարտակում տարվող ընդհատակյա աշխատանքներում ներգրավվեց Ռուբեն Մանուկյանը... Այդ ժամանակ 5-րդ գումարտակը գտնվում էր Լեհաստանի Զամոստիյե և Խոլմ քաղաքներում... Հինգերորդ գումարտակում ծավալված գաղտնի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էր նաև Հարությունն Խաչատրյանը»[32]։ Այդ գումարտակի ակտիվ ընդհատակայիններից էին նաև Աշոտ Ենգիբարյանը, Սուրեն Թադևոսյանը, Սանասար Հարությունյանը, Գուլիշանովը և ուրիշներ։

Սկզբնական շրջանում այս գումարտակում ևս ընդհատակյա աշխատանքների գլխավոր նպատակն էր հայ ռազմագերիներին նախապատրաստել այնպես, որ ռազմաճակատ ուղարկվելու դեպքում նրանք ամբողջ գումարտակով ապստամբեն ֆաշիստների դեմ և անցնեն մեր բանակի կողմը։ Այն բանից հետո, երբ 4-րդ գումարտակը Հոլանդիա ուղարկվեց և պարզ դարձավ, որ գերմանացիները հայկական լեգեոնի նկատմամբ անվստահությամբ են ներշնչված, կենտրոնական բյուրոյի ցուցումով 5-րդ գումարտակի ընդհատակայիններն իրենց կարևոր խնդիրը դարձրին ռազմագերիների խմբերի փախուստները լեհ հայրենասերների մոտ։ Դրա համար անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվել լեհ ընդհատակայինների հետ թե՛ առաջներում հայ ռազմագերիների հաստատած կապերի և թե՛ հետագայում, արդեն Պուլավիում նրանց հետ պահպանվող սերտ շփումների շնորհիվ։ Ճիշտ է, այդ համագործակցությունը մի քանի անգամ ընդհատվել է, բայց ընդհատակին հաջողվել է կարճ ժամանակից հետո կապերը վերականգնել և պահպանել մինչև հայ ռազմագերիներին Լեհաստանից փոխադրելը։

Այդ գործում, տարբեր ժամանակներում, ակտիվ գործունեություն են ծավալել Արփիար Մարտիրոսյանը, Ռուբեն Մանուկյանը, հետագայում նաև Արամ Ազոյանը, Լևոն Տիտանյանը և մի շարք ընդհատակայիններ։ Լևոն Տիտանյանը մասնավորապես հիշատակում է, որ իրեն հաջողվեց կապ հաստատել նաև ռուս հայրենասերների հետ։ «Մեր կազմակերպությունը,—գրում է նա,—կապեր հաստատեց լեհական պարտիզանների հետ։ Կապեր հաստատեցինք նաև 1917 թվից կոմունիստ, Մոսկովյան երկաթուղու պահակախմբի նախկին հրամանատար Կուլիկովի հետ։ Նա մեզ ամեն օր բերում էր Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունները»[33]։

31 Տե՛ս Լ. Տիտանյան, հուշեր (բաղկացած 27 մեքենագրական էջից), էջ 11։

32 Ստ. Յաղջյան, հուշեր, էջ 8։

33 «Պղնձի ֆրոնտում», Ալավերդի, 1958 թ., № 54, Լ. Տիտանյանի «Թշնամու թիկունքում» հոդվածը։

Բավական մեծ է ֆաշիստական ճամբարներից փախած և լեհ հայրենասերների հետ միասին ֆաշիզմի դեմ պայքար մղած հայ ռազմագերիների թիվը։ Դրանցից առաջինների շարքում հիշատակվում է Կոստյա Մարդանյանի անուն ազգանունը։ Պուլավիից նա լեհ հայրենասերների օգնությամբ իր ընկերոջ՝ Նիկոլայ Բաղմանյանի հետ միասին փախել է դեռևս 1942 թ. սեպտեմբերին և պարտիզանական ակտիվ պայքար ծավալել նախ Լեհաստանում, ապա և սովետական պարտիզանական միավորումների անձնակազմում[34]։ Լեհ ընդհատակյաններից Ե. Բավիոնիկի հիշատակությամբ այնուհետև ֆաշիստական ճանկերից դուրս է պրծել և լեհ ընդհատակին միացել Միշա անունով մեկը, որը գործում էր լեհ հայրենասեր Սոբեխի հետ։ Նա պատմում է նաև Լյուդվիգ Ալեքսանդրի Հայրումյանի փախուստի և պարտիզանական գործունեության մանրամասնությունների մասին։ Հայ ռազմագերիներից,—գրում է լեհ ընդհատակյինը,—փախչել ցանկացողներ շատ կային, բայց լեհական ընդհատակյինները «նկատի ունենալով նրանց տեղավորելու դժվարությունները, խորհուրդ էին տալիս փախչելուց ձեռնպահ մնալ և կազմակերպված ձևով բոլորը միասին հանդես գալ ֆաշիզմի դեմ»[35]։

Անկախ դրանից շարունակվում էին ռազմագերիների փախուստները հիտլերյան ճանկերից։ Մի քանի մանր խմբերի փախուստ կազմակերպել է Ռուբեն Մանուկյանը, իսկ չորս հոգուց բաղկացած խմբի փախուստը՝ Ռուբիկ Բաբայանի գլխավորությամբ կազմակերպել է Արամ Ավետիսյանը։ 12 հոգուց բաղկացած մի խմբով ֆաշիստական ոչխից դուրս պրծավ Արամ Վասիլյանը։ Խումբն իր հետ տարավ գերմանական զենք ու զինամթերք, նույնիսկ երկու գնդացիր։ Այն հետագայում միացավ սովետական պարտիզաններին։ Հաջող անցան նաև այն մեծ ու փոքր խմբերի փախուստները, որոնցում ղեկավար դեր էին կատարում Աշոտ Մարտիրոսյանը, Նիկոլայ Հայրապետյանը, Աշոտ Ավագովը, Արմո Գալստյանը, Հրաչը (ազգանունը չի հիշատակվում) և Նիկոլայ Իսախանյանը[36]։

Գերմանական հրամանատարության բոլոր փորձերը՝ կասեցնել փախուստները, հայտնաբերել դրանց կազմակերպիչներին, հետապնդել և ձերբակալել փախչողներին, երկար ժամանակ ապարդյուն էին անցնում։ Նրանց չէր հաջողվում ծուղակի մեջ գցել ընդհատակյիններին, իսկ այդ կատաղեցնում էր ֆաշիստներին։ 1943 թ. սեպտեմբերին գերմանական հրամանատարությունը հինգերորդ գումարտակի հրամանատարների հայ տեղակալներին գաղտագողի ձերբակալելու պլաններ էր մշակում։ Իմանալով այդ մասին, առաջին վաշտի

---

34 Կ. Մարդանյանը բանակ է կանչվել 1939 թ., զերվել է 1941 թ. հուլիսի 2-ին։ Փախչելով գերությունից, նա լեհ պարտիզանների շարքերում ֆաշիզմի դեմ ակտիվ մարտական գործողություններ է մղել, իսկ 1943 թ. սեպտեմբերից Վ. Ի. Լենինի անվան պարտիզանական բրիգադի կազմում ֆաշիզմի դեմ պայքարել է մինչև 1944 թ. հուլիսի վերջը, երբ միավորումը միացել է մեր բանակին։ Գործող բանակից զորացրվել է 1945 թ. նոյեմբերին։ Նա պարգևատրված է Կարմիր Աստղի շքանշաններով և «Հայրենական պատերազմի պարտիզան» առաջին աստիճանի մեդալով։ Այժմ նա Հայկական ՍՍՌ վաստակավոր ուսուցիչ է, աշխատում է Շամշադինի շրջանի Բերդ գյուղի միջնակարգ դպրոցում (տե՛ս Բավիոնիկի և Կ. Մարդանյանի հուշերը՝ բաղկացած 14 էջից)։ Իսկ Ն. Ա. Բաղմանյանը 1943 թ. հուլիսի 12-ին ֆաշիստների հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ սպանվել է և թաղված է լեհական Բալտով գյուղի գերեզմանատանը։

35 Ե. Դ. Բ ա վ ի ո ն ի կ, հուշեր։

36 Տե՛ս Ռ. Մ ա ն ո ւ կ յ ա ն ի, Լ. Տ ի տ ա ն յ ա ն ի, Ա. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն ի, Ստ. Յ ա ղ ջ յ ա ն ի հուշերը։

հրամանատարի հայ տեղակալ Մկրտիչ Գրիգորյանը, որը և գլխավորում էր ընդհատակյա աշխատանքները, Ռ. Մանուկյանի միջոցով կապվեց կենտրոնական բյուրոյի հետ և հայտնեց անհապաղ փախչելու անհրաժեշտության մասին[37]։ Չնայած ֆաշիստների ձեռնարկած բոլոր միջոցառումներին, սովետական քաջարի մարտիկին և նրա հայրենասեր ընկերներին հաջողվեց դուրս պրծնել ֆաշիստական մագիլներից։ «Սեպտեմբերի 6-ին,—գրում է Արամ Ավետիսյանը,—գերմանացիները հասկանալով մեր մտադրությունը, արդեն շրջապատեցին լեգեոնը։ Մեր տղաներից Մկրտիչ Գրիգորյանին և երրորդ վաշտի հրամանատարի հայ տեղակալ Անուշավան Մարտիրոսյանին գերմանացիները ուզում էին բռնել, բայց նրանք ուրիշ յոթ ակտիվ ընդհատակյաների հետ միասին ժամանակին փախան և շուտով միացան պարտիզաններին»[38]։ Հաջորդ օրն իսկ ֆաշիստները, խիստ հսկողության տակ, 5-րդ գումարտակը փակ վագոններում, փոխադրում են Գերմանիա, ապա և Հյուսիսային Ֆրանսիա, ուր ընդհատակյա աշխատանքները ոչ միայն չեն դադարում, այլև նոր ծավալ են ստանում և հասցնում գերմանացիների դեմ զինված պայքարի։

Ֆաշիստական գերությունից փախած հայ ռազմագերիները, Սովետական Միության մյուս ազգությունների ռազմագերիների հետ միասին, վճռական դեր էին կատարում լեհական դիմադրական շարժման մեջ։ Այդ մասին վկայում է լեհ պատմաբան Վլադիսլավ Փուրան, որն իր ուսումնասիրության մեջ մի քանի անգամ մատնանշում է Լեհաստանում գործած պարտիզանական խմբերի կազմում հայ նախկին ռազմագերիների մղած պայքարը։ Նա մասնավորապես հիշատակում է պարտիզանական այն խմբի գործողությունները, որի հրամանատարն էր նախկին ռազմագերի Միշա Պետրոսյանը[39]։

Պուլավիի հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպությունն իր լայն գործունեությունը ծավալեց նաև 6-րդ գումարտակում։ Այստեղ ևս ընդհատակյա աշխատանքը ղեկավարում էին ՀԸՀԿ-ի ակտիվ անդամներ Արամայիս Հովսեփյանը, Սուխարիչ Հարությունյանը, Համո Սուքիասյանը, Արամ Ազոյանը, որոշ ժամանակ նաև Ռուբեն Մանուկյանը և ուրիշներ, որոնք իրենց շուրջն էին համախմբել հայրենասիրական ուժերին։ Գումարտակի ընդհատակյաները կենտրոնական բյուրոյի հետ կապ էին պաշտպանում Ստեփան Յաղջյանի, Լևոն Տիտանյանի և Ռուբեն Մանուկյանի միջոցով։

Երկարատև և դժվարին աշխատանքով ընդհատակյաներին հաջողվեց գումարտակում ստեղծել հակաֆաշիստական կայուն կազմակերպություն, որն իր առջև խնդիր էր դրել գումարտակի ամբողջ անձնակազմով ապստամբել ֆա-

---

37 «Պուլավիում,—գրում է Ստ. Յաղջյանը,—ինձ հետ կապվեց գումարտակային կոմիսար Մկրտիչ Գրիգորյանը և հաղորդեց, որ ընդհատակի ղեկավարների կյանքը վտանգի տակ է, ամեն մի րոպե կարող են ձերբակալել, հարկավոր է օգնել կազմակերպելու ուր հոգու փախուստ։ Ես նրանց հաղորդեցի նշանաբանը, մարշրուտը և լեհ հայրենասերներին գտնելու տեղավայրը...» («Հուշեր», էջ 9)։

38 Ա ր. Ա վ ե տ ի ս յ ա ն, Հուշեր (բաղկացած 13 մեքենագիր էջից), էջ 8։

39 «Լեհ-սովետական պարտիզանական ջոկատների համալրման երկրորդ աղբյուրը,—այնուհետև գրում է լեհ պատմաբանը,—սովետական այն մարտիկներն էին, որոնք փախչում էին ֆաշիստական զինված ուժերից, ուր նրանք հավաքվել էին մահվան սպառնալիքի տակ... Սովետական մարտիկների նշանակալից մասը, առաջին իսկ հարմար պահին փախչում էր պարտիզանների մոտ, որպեսզի մասնակցի հիտլերիզմի դեմ մղվող պայքարին և կատարի իր պարտքը Հայրենիքի առաջ։ Ֆաշիստական գերությունից ու ֆաշիստական վարժակայաններից փախուստները հատկապես մեծ թափ ստացան 1943—1944 թվականներին։

շիստների դեմ և անցնել կամ լեհական դիմադրական ուժերի կողմը, եթե երկար ժամանակ մնալու լինեն Լեհաստանում, կամ էլ միանալ սովետական զինված ուժերին, եթե ուղարկեն դեպի Արևելք։ Այստեղ ևս գումարտակի հրամանատարական պոստերում գտնվող հայ ռազմագերիները կապված էին ընդհատակի հետ և լիովին համերաշխ էին նրա պլաններին։ Դրանցից էին՝ Ժ. Կարապետյանը, Ժ. Բաղդասարյանը, Մ. Սահյանը, Վ. Աբովյանը։

1943 թ. օգոստոսի վերջին ֆաշիստները այս գումարտակը փոխադրեցին Ժիտոմիրի մարզը, որպեսզի պայքարեն հիտլերյան զավթիչներին օր ու գիշեր հանգիստ չտվող ուկրաինական պարտիզանների դեմ և պարենամթերք հավաքեն բնակչությունից։ Դա էլ պայմաններ ստեղծեց ընդհատակի հետապնդած պլանների իրագործման համար։ Սեպտեմբերի կեսերին այդ գումարտակի վաշտերից մեկը՝ լեյտենանտ Արամայիս Հովսեփյանի գլխավորությամբ, իր ամբողջ անձնակազմով (թվով 248 մարդ) և ռազմական հանդերձանքով, դուրս պրծավ ֆաշիստների ճիրաններից և միացավ սովետական պարտիզանական միավորմանը, որի հրամանատարն էր Ա. Ի. Նաումովը[40]։ Գումարտակի մյուս երկու վաշտերը զինաթափ են արվել և հատուկ հսկողության տակ ուղարկվել Արևմուտք։ Այդ գումարտակից մի ջոկատ ֆաշիստները տեղավորել էին Ժիտոմիրի մարզի Բարիշևկա շրջկենտրոնում, ուր գտնվող հոսպիտալի բուժաշխատողները կապ ունեին սովետական պարտիզանների հետ։ Նրանց միջոցով էլ Արամ Ազոյանին հաջողվեց հանդիպել մոտակա անտառներում գտնվող սովետական պարտիզաններին և պայմանավորվելուց հետո, շուտով 80 հոգուց բաղկացած իր խմբով միացավ նրանց[41]։

ՀԸՀԿ-ն 1943 թ. ընթացքում հակաֆաշիստական ընդհատակյա իր գործունեությունը միաժամանակ ծավալեց հենց Պուլավիի ուսումնա-վարժական կայանում, ուր գտնվում էր կենտրոնական բյուրոն և նրա քարտուղար Ստ. Յաղջյանը։ Ֆրանսերեն, ապա և որոշ չափով գերմաներեն իմանալը Ստ. Յաղջյանին հնարավորություն տվեց շփվել վարժակայանի գերմանացի հրամանատարների, ապա և մտերմանալ գերմանական ծառայության մեջ գտնվող մի չեխ լեյտենանտի հետ։ Դա պայմաններ ստեղծեց, որ նա մնա ուսումնա-վարժական կայանում, ուր շարունակ նորանոր մարդիկ էին բերվում՝ ազգային լեգեոնի համար նախապատրաստելու նպատակով, և որոնց հետ Ստեփան Յաղջյանը և նրա մարդիկ շարունակ շփման մեջ էին մտնում, ընտրում վստահելիներին, բացատրում իրադրությունը, կապում ընդհատակի հետ, հանձնարարություններ տալիս, գործի դնում։ Այդ շրջանում ևս ընդհատակյա աշխատանքի ամբողջ ոգին, ուղղություն տվող կենտրոնը շարունակում էր մնալ Ստեփան

---

40 Մեր ձեռքի տակ են Ա. Հովսեփյանի ինքնագիր, գեղեց անավարտ հիշողությունները (մեքենագրված՝ 45 էջ)։ Նրա վաշտի պարտիզանական գործողությունների մասին պատմող արխիվային նյութեր ևս կան։ Սակայն մենք այստեղ չենք պատմում այդ ջոկատում ծավալված ընդհատակյա աշխատանքների և նրա հետագա պարտիզանական գործողությունների մասին, որովհետև այդ հարցերին են նվիրված Ե. Խալեյանի «Ա. Ի. Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատի մարտական գործողությունները Ուկրաինայում 1943—1944 թթ.» (տե՛ս «Տեղեկագիր», 1947 թ., № 2, էջ 83—98) և Վ. Ղազախեցյանի «Организация армянского партизанского отряда в Житомирской области в 1943 году» (տե՛ս «Տեղեկագիր», հաս. դիտութ., 1962, № 1, էջ 3—16) հոդվածները։

41 Ա. Ազոյանի պարտիզանական ջոկատը ֆաշիզմի դեմ պայքարել է Շչորսի անվան պարտիզանական միավորման կազմում։ Նրա հրամանատարն էր Ս. Մալիկովը (տե՛ս Ա. Ազոյանի հուշերը և փաստաթղթերի պատճենները)։

Յաղջյանը, որ այդ բարդ պայմաններում դժվարին, ամեն վայրկյան մահ սպառնող գործունեություն էր ծավալում, օրինակ տալիս բոլորին, իրար հետ կապում ընդհատակյա խմբերը, ուղղություն տալիս նրանց աշխատանքին։ Այսօր, նախկին ռազմագերիների ու ընդհատակյաների հիշողության մեջ նա մնացել է իբրև ստեղծված բոլոր պայմաններն իր հայրենասիրական նպատակներին ծառայեցնելու ընդունակ, անդադրում գործող, երբեք չընկճվող ու չհուսահատվող, ներքին ինքնավստահությամբ ու պայծառ հավատով օժտված անձնավորություն, որ հիանալի կոնսպիրատոր լինելով գլուխ էր հանում ամենաբարդ իրադրության մեջ։ Նա իր գործունեությունն ավելի եռանդուն ծավալեց այն բանից հետո, երբ ֆաշիստները «սովետսկի մոյորին» նշանակեցին ուսումնա-վարժական կայանի սանիտարական մաքրությանը հետևող հավաքարարների ավագ։

Այդ ժամանակ էլ Ստեփան Յաղջյանը Վլադիմիր-Վոլինսկու[42] ճամբարից Պուլավի բերված ռազմագերիների մեջ հանդիպեց Բարթուղ Պետրոսյանին, որը հայտնի էր իբրև Հայրենական պատերազմում աչքի ընկած անվախ հրամանատար։ Շուտով Բարթուղ Պետրոսյանը, նրա հետ նաև հայրենասեր ռազմագերիներ՝ Պարգև Մալխասյանը, Հապետ Սիմոնյանը, Հակոբ Զորանյանը, Էմիլ Զորյանը, Բարկեն Հովհաննիսյանը, Վահան Ռոստոմյանը, Աշոտ Ղարդաշյանը, Զավեն Նազարեթյանը, Պետիկ Հարությունյանը, Մանվել Ոսկանյանը, Գուրգեն Բաղալյանը, Մկրտիչ Սարգսյանը, Կարապետ Կարապետյանը, Հայկազ Վարդանյանը, Ժորժ Միսկարյանը, Ղազարոս Պողոսյանը, Խրիստ Մանուչարյանը, Մկրտիչ Կարապետյանը, Համազասպ Ավագյանը, Մատթեոս Դանիելյանը, Խաչիկ Համբարձումյանը, Գուրգեն Անտոնյանը, Իսրայել Սարդարյանը և շատ ուրիշներ ընդգրկվեցին ՀԸՀԿ-ի շարքերը։ Հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպությանը, 1943 թ. աշնանը, միախառնվեցին Դեմբլինի կազմալուծված ճամբարից Պուլավի փոխադրված ռազմագերիները՝ Ալ. Ղազարյանի և Դ. Մինասյանի գլխավորությամբ[43]։

Պուլավիի Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպության կենտրոնական բյուրոյի մեջ, 1943 թ. օգոստոսին, բյուրոյի քար-

---

42 Վլադիմիր-Վոլինսկու ճամբարում գնդապետ Աշոտ Մաթևոսյանի գլխավորությամբ գործում էր ռազմագերիների հայրենասիրական կազմակերպություն։ Այս և Սովետական Միության տերիտորիայում գործած մյուս հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպությունների գործունեությունը դուրս է մնում մեր այս թեմայի շրջանակներից։

43 Դեմբլինում գործող ընդհատակի հիմնական խնդիրներից մեկը, ինչպես պատմում են նրա ղեկավարները, եղել է գերմանական պրոպագանդիստական դասակի («Պրոպցուկ») գործունեության դեմ պայքարելը։ Հայ ռազմագերիների հոգեկան մշակման նպատակով գերելության պրոպագանդան ոչ մի չանք չէր խնայում։ Բայց նրա ճիգերը հիմնականում ապարդյուն անցան։ Կոնտրպրոպագանդա մղելու հետ միաժամանակ Դեմբլինի ընդհատակը ձախողում էր ֆաշիստական պրոպագանդիստների միջոցառումները, ստահոդ լուրերին հակադրում Սովետական Բանակի հաղթական հարվածների մասին կոնսպիրացիոն ճանապարհով ստացվող հաղորդագրությունները։ Պետրոս Թումոյանը, Արտեմ Կակոյանը, Սիմոն Ֆրանգուլյանը, Ազատ Խաչատրյանը, Շալիկոն պարբերաբար պոկում էին ֆաշիստական պլակատները, թռուցիկներն ու թերթերը։ Ընդհատակյաները կազմակերպել են ռազմագերիների մի քանի փոքր խմբերի փախուստներ Դեմբլինից, քողարկել են հրեա գերիներին։ Դեմբլինից իբրև բանվորական դումարտակ դեպի Արևելք ուղարկված ռազմագերիների մի խոշոր խումբ Սերգեյ Հարությունյանցի գլխավորությամբ փախչելով գերմանացիների մոտից, միացավ սովետական պարտիզաններին։ Այդ խմբի գործունեությանն է նվիրված Ս. Հարությունյանցի «По ту сторону фронта» գիրքը։ Ереван, 1957, 332 стр.

տուղար Ստ. Յաղջյանից և նրա երկու հին անդամներ Ալ. Ղազարյանից ու Դ. Մինասյանից բացի մտնում էին նաև Բարթուղ Պետրոսյանը[44] և Լևոն Տիտանյանը[45]։

1943 թ. կեսերին ՀԸՀԿ-ն իր առջև արդեն խնդիր էր դնում լեգեոնը զինված ապստամբության հանել ֆաշիստների դեմ և պարտիզանական պայքար ծավալել։ Նախատեսվում էր ապստամբության ազդանշանը տալ լեհական ընդհատակի հետ համաձայնեցված ժամկետում։ Սակայն, Լեհաստանում այն ժամանակ տիրող իրադրությունը, դիմադրական շարժման ներսում գոյություն ունեցող հակամարտությունները հնարավորություն չտվեցին ապստամբության միասնական դրոշ պարզել զավթիչների դեմ։ Այն ժամանակ կենտրոնական բյուրոն կանգնեց ինքնուրույն գործելու փաստի առջև և սկսեց լեգեոնը վճռական ելույթի նախապատրաստել։

Ընդհատակի անդամներից մի քանիսը բյուրոյից հանձնարարություն ստացան զենք հայթայթել։ Կատարելով այդ առաջադրանքը, Մարդար Մարգարյանին, Գրիգոր Մինասյանին, Արփիար Մարտիրոսյանին և Սերգեյ Բագրատյանին («Կիրպիչնիկ») հաջողվեց թափանցել Պուլավիի ուսումնա-վարժական կայանի հիտլերյան զինապահեստները և մի քանի ավտոմատներ, հրացաններ, նռնակներ և բավականաչափ փամփուշտ դուրս բերել։ Վարժակայանից աղբ փոխադրող սայլապանի միջոցով այդ զենքի ու զինամթերքի մի մասը դուրս տարվեց լեգեոնի տերիտորիայից և հանձնվեց լեհ պարտիզաններին, իսկ մնացածը՝ թաքցվեց մոտակա անտառում[46]։ Զանազան ճանապարհներով ձեռք բերված զենքի ու զինամթերքի մի մասը ընդհատակյաները թաքցնում էին հենց վարժակայանում այս ու այնտեղ հորելով և կամ էլ գերմանացի հրամանատարների մոտ սպասյակի դեր կատարող հայ հայրենասերների օգնությամբ՝ նրանց իսկ բնակարաններում։ Մասնավորապես մատնանշվում է, որ Արշավիր Ծատուրյանին և Դավիթ Կոստանդյանին այդ ճանապարհով հաջողվեց երկար ժամանակ թաքցրած պահել զինամթերքով բարձած մի վագոնի դատարկման ժամանակ Եգոր անունով ռազմագերու ձեռք բերած ատրճանակներն ու ձեռնա-

44 Բարթուղ Ղազարի Պետրոսյանը ծնվել է 1901 թ., Էրզրումի Զֆտլիկ գյուղում։ 1919 թ. ծառայել է հայկական 7-րդ դնդում և մասնակցել ընդհատակյա աշխատանքներին։ Ապա նա մտել է 11-րդ Կարմիր Բանակի շարքերը, ակտիվորեն մասնակցել է քաղաքացիական կռիվներին. պայքարել դաշնակցության և բանդիտների դեմ։ Կարմիր պարտիզան ռազմաճակատ է մեկնել Հայրենական պատերազմի առաջին օրերին և մարտական սխրագործությունների համար 1942 թ. պարգևատրվել է Կարմիր Դրոշի շքանշանով։ Նրան է նվիրված գրող Հրաչյա Քոչարի գործող բանակից գրված ակնարկներից մեկը, որ կրում է «Հերոսների ծնունդը» ընդհանուր վերնագիրը։ Այն «Սովետական Հայաստան» թերթում տպագրվելուց հետո տեղ է գտել համանուն գրքում։ Նույն տարվա մայիսին ուշագնաց վիճակում, Խարկովի տակ նա գերվել է։ Նա պարգևատրված է նաև ֆրանսիական շքանշաններով։ Այժմ աշխատում է Երքազսովետի «Երևանն» հյուրանոցի դիրեկտորի պաշտոնում։ ՍՄԿՊ անդամ է 1928 թ.։

45 Լևոն Միքայելի Տիտանյանը ծնվել է 1912 թ., Ալավերդու շրջանի Ուղունլար գյուղում։ Պատերազմից առաջ նա աշխատում էր ՀԼԿՍՄ Ալավերդու շրջկոմի քարտուղարի պաստում։ Կամավոր կերպով բանակ մեկնելով, նա մասնակցեց Սևաստոպոլի հերոսական պաշտպանությանը։ Գերվել է գիտակցությունը կորցրած վիճակում հերոս քաղաքը թողնելու ժամանակ։ Խոլմի ճամբարում նա հայրենասիրական աշխատանք էր կատարում Հայկազ Պողոսյանի, Վասիլ Սարգսյանի, ապա և Արամ Ազոյանի, Գրիշտ Մինասյանի, Արշակ Հախվերդյանի, Վոլոդյա Զորոնովի և Լիպտրիտ Հովհաննիսյանի հետ։ ՍՄԿՊ անդամ է 1939 թ.։ Այժմ աշխատում է Ալավերդում, իբրև շրջսովետի գործկոմի սոցապբաժնի վարիչ։

46 Տե՛ս Ռ. Մանուկյանի հուշերը (մեքենագրական 44 էջ), էջ 26 և Ս. Բագրատյանի հուշերի սղագրությունը, էջ 13—14։

ումբերը, որոնք հետո դուրս տարվելով, հանձնվեցին լեհ հայրենասերներին[47]։

Պատմելով զինված ապստամբության նախապատրաստության մասին, Բարթուղ Պետրոսյանը մատնանշում է, որ ՀԸՀԿ-ի ակտիվ անդամները բաժանված էին առանձին խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ղեկավարն ու կոնկրետ առաջադրանքը, որ պետք է իրագործեր ազդանշան տալու պահին։ Ընդամենը ստեղծված էր այդպիսի 5—6 խումբ։ Դրանց կազմի մեջ մտնողներից մի քանիսն ունեին մարտական զենքեր, իսկ մեծ մասն իբրև զենք պետք է գործածեր կացին, երկաթի կտորներ, դագանակ, լոմ ու բահ։ Նախատեսվում էր նախ և առաջ ոչնչացնել լեգեոնում գտնվող գերմանական հրամկազմը, ապա վարժականները հսկող ժամապահներին, ինչպես նաև ֆաշիստներին ծախված-ներին։ Ուսումնա-վարժական կայանում գտնվող սակրավորների դասակի հրամանատար Բարկեն Հովհաննիսյանը խնդիր ուներ ապստամբության ազդանշանը տրվելու պահին կտրել հեռախոսալարերը, փչացնել ռադիոկապը, կտրտել փշալարերը, շարքից դուրս բերել մոտակա կամուրջը։

Նախապատրաստվող ապստամբության մասին տեղյակ էին ակտիվ ընդհատակայինները։ Այդ մասին գիտեին նաև ուսումնա-վարժական կայանի տերիտորիայից դուրս գտնվող գումարտակների ընդհատակյա կազմակերպությունների ղեկավարները, որոնք իրենց հերթին պետք է ոտքի հանեին հայրենասիրական ուժերը։ Սկզբում նախատեսվում էր ապստամբության դրոշ պարզել սեպտեմբերի 5-ի գիշերը, բայց այդ օրը վարժականում պահակային ներքին ծառայության նշանակվեցին ոչ թե իր մեծ մասով ընդհատակայիններից բաղկացած պահակախումբը, ինչպես սպասվում էր, այլ անվստահելի մարդիկ։ Դա ստիպեց հետաձգել ապստամբությունը։ Իսկ մի քանի օր հետո, գրեթե պատահաբար, հայտնի դարձավ, որ Պուլավիի ուսումնա-վարժական կայանը չորս կողմից ականապատված է։ Դա խարխլեց ապստամբության պլանը։

Այդպես անցավ սեպտեմբերը, իսկ հոկտեմբերի 15-ին ուսումնա-վարժական կայանը շրջապատվեց հիտլերյան հետևակային զորամասերով ու տանկերով, որոնց հրանոթափողերն ուղղված էին վարժականին։ Ֆաշիստները վաղ առավոտյան ոտքի հանեցին բոլոր ռազմագերիներին և ուժեղացված հսկողության տակ կայարան քշեցին։ Այստեղից սովետական մարդիկ փակ վագոններով ուղարկվեցին Հարավային Ֆրանսիա, ուր ՀԸՀԿ-ն իր գործունեությունը վերսկսեց՝ արդեն նոր պայմաններում ու նոր պլաններով։ Այն պսակվեց փայլուն հաջողությամբ[48]։

Եթե ամփոփելու լինենք կոմունիստների գլխավորությամբ հայ ռազմագերիների Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական այս կազմակերպության գործունեության առաջին էտապի արդյունքները, ապա կարելի է նշել հետևյալը.

1. ՀԸՀԿ-ն իր ընդհատակյա գործունեությամբ քայքայեց հայ ռազմագերիներից հարկադրաբար ստեղծած 4-րդ, 5-րդ և 6-րդ գումարտակները և հնարավորություն չտվեց ֆաշիստներին դրանք սովետական ժողովրդի դեմ դուրս բերել։

---

47 Սոս Նուրիջանյանի պատմածից։

48 1943 թ. վերջին և 1944 թ. առաջին ամիսներին Ֆրանսիական Մանգ քաղաքում ՀԸՀԿ-ի ծավալած ընդհատակյա գործունեությունը դուրս է մնում սույն հոդվածի սահմաններից։

2. ՀԸՀԿ-ի շնորհիվ Դեմբլինում և Պուլավիում կենտրոնացված հայ ռազմագերիները շուրջ 17 ամիս գտնվում էին նրա հայրենասիրական հակաֆաշիստական գործունեության ազդեցության տակ և մնացին սովետական հայրենասերներ, հաստատ պահեցին իրենց հավատը սովետական ժողովրդի հաղթանակի նկատմամբ։

3. Ընդհատակը դրեց ֆաշիզմի դեմ հայ ռազմագերիների մասսայական պայքարի սկիզբը և իր անդամներին նպատակամղեց դեպի պարտիզանական պայքարը հիտլերյան զավթիչների դեմ՝ ուր էլ նրանք գտնվելիս լինեն՝ Սովետական Միության տերիտորիայում, թե օկուպացված մյուս երկրներում[49]։ Սովետական պարտիզանների հետ ֆաշիզմի դեմ պայքարելուց բացի «ՀԸՀԿ-ի անդամները մասնակցեցին Հոլանդիայի, Հարավսլավիայի, Հունաստանի, Չեխոսլովակիայի պարտիզանական շարժումներին»[50]։

---

49 Սովետական Միության տերիտորիայում ՀԸՀԿ-ի անդամների մղած ակտիվ պարտիզանական պայքարի մասին հիշատակվեց հոդվածի ընթացքում։ Ինչ վերաբերում է եվրոպական մյուս երկրների սահմաններում նրանց ծավալած պարտիզանական գործողություններին, ապա համառոտակի նշենք հետևյալը.

ա) Բանտարկության դատապարտված ՀԸՀԿ-ի անդամներից Արտեմ Բաբայանին հաջողվեց փախչել ֆաշիստական ճիրաններից և միանալ չեխոսլովակյան դիմադրական շարժմանը։ Ստեղծելով սովետական նախկին ռազմագերիներից բաղկացած հատուկ պարտիզանական ջոկատ, նա ֆաշիզմի դեմ ակտիվ պայքար ծավալեց և իր ջոկատով մասնակցեց Նովա Պակա և Իյիչի քաղաքների ազատագրմանը։ Ֆաշիզմի դեմ նրա մղած ընդհատակյա պայքարի և պարտիզանական ակտիվ գործողությունների մասին են մասնավորապես պատմում Բաքվի «Вышка» թերթում 1960 թ. հուլիս ամսվա №№ 157—163-ում հրատարակված Ն. Մակեևի ակնարկաշարքը, Չեխոսլովակիայում լույս տեսած «Նրանք մեզ համար խաղաղություն են նվաճել» գրքի հեղինակը, „Preuovoj" թերթի մայիսի 15-ի առաջնորդողը և այլ աղբյուրներ։ Մեր ձեռքի տակ են Ա. Բաբայանի հուշերը և փաստաթղթերի ու լուսանկարների պատճենները։

բ) Չեխոսլովակիայում պարտիզանական պայքար է ծավալել նաև ՀԸՀԿ-ի ընդհատակյա բյուրոյի անդամ Վահան Վարդանյանը, որը Ռուբեն Դանիելյանի հետ միասին ստեղծել էր սովետական ռազմագերիներից բաղկացած պարտիզանական հատուկ ջոկատ։ Նրա մասին դեռևս 1945 թ. մայիսի 13-ի համարում պատմել է չեխական „Ceska pravda" թերթը և ռադիոն։ Մեր ձեռքի տակ են Վ. Վարդանյանի հուշերը (մեքենագրված 7 էջ)։

գ) Հոլանդական կողմները փոխադրված հայ ռազմագերիներն իրենց գործունեությունը Պանդուխտ Մելոյանի, Սուրեն Սարգսյանի, Սարգիս Կարապետյանի, Աղատ Խաչատրյանի և Վաչագան Գաբրիելյանի գլխավորությամբ շարունակել են մինչև 1945 թ. մարտի վերջը։ Հիտլերականները ձնդակահարեցին այս ընդհատակի մի շարք հայրենասեր ընկերների։

դ) Ընդհատակյա երկարատև աշխատանքից հետո պարտիզանական պայքար ծավալեցին Ֆրանսիա փոխադրված 5-րդ և 6-րդ դումարտակներում գտնվող հայ ռազմագերիները, որոնք պատերազմն ավարտվելուց հետո միացան երկրի հարավում գտնվող սովետական պարտիզաններին։

ե) Պուլավիից Ֆրանսիայի հարավային շրջանները փոխադրված հայ ռազմագերիները կապվելով դիմադրական ուժերի հետ առանձին խմբերով փախան գերմանական ճամբարներից և միացան ֆրանսիական պարտիզաններին, իսկ հետագայում միավորվեցին առանձին դնդի մեջ։ Հայ ռազմագերիների այս խոշոր խմբի գործունեությունը ևս առանձին ուսումնասիրության առարկա է։

50 «Советская историческая энциклопедия», М., 1961, т. I, стр. 614.